



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1647-Ա/2

«01» հոկտեմբերի, 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1627-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 7-ի N 1066-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը հաստատելու մասին» N 1627-Ա/2 հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

(պարտականությունները կատարող)

ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 1066-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅՑԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Հ/Հ	Ծածկագիր	Վերնագիր	Ղեկավար	Կազմակերպություն
1.	21APP-2J001	Ջրածնի ցածր կոնցենտրացիաներ հայտնաբերող նանոկառուցվածքային սենսորի պատրաստում	Ալեքսանյան Միքայել Սերյոժայի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
2.	21APP-2D015	Կառավարման և ավտոմատացված համակարգով բարձր արտադրողական այգեգործական հողամշակ մեքենայի պատրաստում և արտադրական փորձարկում	Ալթունյան Արթուր Վաղինակի	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
3.	21APP-2F011	3D տպագրությամբ բիոակտիվ բիոքայքայվող իմպլանտների արտադրություն ոսկրային հյուսվածքների վերականգնման համար	Աղայան Մարինա Աղասի	«Էյվաֆի Թեք» ՍՊԸ
4.	21app-2G014	⁶⁸ Ga բժշկական իզոտոպի պինդ թիրախով ցիկլոտրոնային արտադրության տեխնոլոգիայի մշակում, [⁶⁸ Ga]GaCl ₃ ստացում	Դալլաքյան Ռուբեն Կոլյայի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
5.	21APP-2J013	Մետաղօքսիդային նանոկառուցվածքային թաղանթների հենքով գազային տվիչների և «Էլեկտրոնային քիթ» միկրոհամակարգերի պատրաստում	Երանոսյան Մկրտիչ Ալեքսանի	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ

6.	21APP-2B012	ԿԷՎ Էներգիաներով էլեկտրոնների գերբարձր հաճախությունների պարույրաձև սկանավորող համակարգ	Էլբակյան Հայկ Վաչագանի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
7.	21APP-1F007	Հակակորոնավիրուսային պատրաստուկների նախակլինիկական հետազոտությունների ընդհանրական հարթակի հիմնադրում	Կարայյան Զավեն Ալեքսանդրի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
8.	21APP-3C009	Մարդու արյան պլազմայից ալբումինի և նորմալ իմունոգլոբուլինի պատրաստուկների արտադրման տեխնոլոգիաների մշակում և փորձնական նմուշների ստացում	Կիրակոսյան Գայանե Ռաֆայելի	ՀՀ ԳԱԱ «Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
9.	21APP-1F010	«Միջուկ-թաղանթ» տիպի նանո և միկրոչափային կառուցվածքների նախագծում հիվանդությունների թերանոստիկայում կիրառելու համար	Հովհաննիսյան Աշխեն Արտաշեսի	«Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան» ԲՄԿ ՊՈՒՀ
10.	21APP-2E008	Ժամանակակից էկոլոգիապես առավել անվտանգ կենցաղային քիմիական միջոցների, տեխնիկական սպասարկման միջոցների արդյունավետ արտադրական տեխնոլոգիաների մշակում և ներդրում	Մարտիրյան Արմեն Իգնատիոսի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
11.	21APP-1E006	Շրջակա միջավայրում և հանքարդյունաբերությունում ծանր մետաղների քանակական որոշման նոր տեխնոլոգիա	Շահինյան Ալբերտ Հայրապետի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
12.	21APP-1F003	Կորբայի թույնի և խնկածաղկի եթերայուղի համակցված պրեպարատի հակացավային և հակաբորբոքային ազդեցությունների հետազոտությունը	Ոսկանյան Արմեն Վաղինակի	ՀՀ ԳԱԱ «Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
13.	21APP-1C016	Լայնամասշտաբ կոհերենտ օպտիկական մատրիցային բազմապատկիչ	Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ